Հաստատված է

ՀՀ ԳԱԱ ԿԳՄԿ գիտական խորհրդի

<<10>> նոյեմբերի 2018թ. Թիվ 131 նիստում

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ տնօրեն

Ա. Սարգսյան

# ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

## ՀՀ ԳԱԱ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ

## ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՀԱՐՑՄԱՆ

Երևան 2018

## 1.Ընդհանուր դրույթներ

1.1 Ուսանողների կրթական կարիքների բացահայտմանն ուղղված ուսանողական հարցման (այսուհետ՝ ուսանողական հարցման) կարգը սահմանում է ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցման կանոնակարգը:

1.2 Ուսանողական հարցումն անցկացվում է <<Կրթության մասին>> ՀՀ օրենքի և ԳԿՄԿ կանոնադրության պահանջների հիման վրա և համարվում է ԳԿՄԿ ուսանողների՝ ուսուցման որակն ապահովող գործառույթներին մասնակցելու և կենտրոնի գործունեության արդյունավետությունը գնահատելու իրավունքի դրսևորում:

1.3 Ուսանողական հարցման կարգը հաստատում է ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ գիտական խորհուրդը:

1.4 Ուսանողական հարցման կարգում փոփոխություններ և լրացումներ կատարում է ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ Կրթության որակի ապահովման բաժինը:

## 2.Ուսանողական հարցման անցկացում

2.1 Ուսանողական հարցումն իրականացվում է ուսումնական տարվա ընթացքում:

2.2 Ուսանողական հարցումն անցկացվում ԳԿՄԿ Կրթության որակի ապահովման բաժնի կողմից սույն կարգին կից հարցաթերթով (Հավելված 1):

2.3 Ուսանողական հարցումն անանուն է:

2.4 Ուսանողական հարցումն անցկացվում է էլեկտրոնային տարբերակով՝ խմբի ուսանողների ներկայացուցչական քանակն ապահովելու պայմանով:

## 3. Ուսանողական հարցման արդյունքների մշակում և պահպանում

3.1 Ուսանողական հարցման արդյունքները մշակվում են Կրթության որակի համապատասխան մասնագետի կողմից:

3.2 Ուսանողական հարցման արդյունքները պահպանվում են Կրթության որակի ապահովման բաժնում:

## 4. Ուսանողական հարցման արդյունքների կիրառումը

4.1 Ուսանողական հարցման արդյունքները ՌԱ բաժինը ներկայացնում է տնօրինությանը, անհրաժեշտության դեպքում նաև այլ ստորաբաժանումներ (դեկանատ, ուսումնական մաս):

**4.2** Ուսանողական հարցման արդյունքները քննարկվում են համապատասխան ստորաբաժանումներում;

**4.3** Մշակվում է կրթական կարիքների բարելավմանն ուղղված համապատասխան գործողությունների պլան:

Հավելված 1

## ԳԿՄԿ մագիստրոսների կրթական կարիքների բացահայտմանն ուղղված հարցում

Հարգելի ուսանող,
Խնդրում ենք մասնակցել կրթական կարիքների բացահայտմանն ուղղված հարցմանը: Ձեր անկեղծ պատասխանները կօգնեն ճիշտ գնահատել կրթական կարիքները և կնպաստեն դրանց բարելավման գործընթացին ԳԿՄԿ-ում: Ակնկալում ենք Ձեր անկեղծ պատասխանները և աջակցությունը:
Շնորհակալություն հարցմանը մասնակցելու համար:

Սեռը 1.Արական _________ 2.Իգական________

Մասնագիտությունը ------------------------------------------------------------------------------------------------

**1.Ամբիոնների կողմից քննական (ստուգարքային) հարցաշարերը տրվում են ժամանակին:**

| | | | |
|---|---|---|---|
| Տրվում են ժամանակին | Լինում են ուշացումներ | Չեն տրվում Ժամանակին | Դժվարանում եմ պատասխանել |

**2.Ամբիոնների կողմից մագիստրոսական թեզի թեմաները և առաջադրանքները տրվում են ժամանակին:**

| | | | |
|---|---|---|---|
| Տրվում են ժամանակին | Լինում են ուշացումներ | Չեն տրվում ժամանակին | Դժվարանում եմ պատասխանել |

**3.Ուսանողներն ապահովված են բավարար մեթոդական նյութերով (դասագիրք, էլ. դասախոսություն, մեթոդական ցուցումներ, առարկայի հարցաշարեր և այլ նյութեր):**

| | | | |
|---|---|---|---|
| Բավարար | Մասամբ բավարար | Ոչ բավարար | Դժնարանում եմ պատասխանել |

**4.Ձեր գոհունակությունը գիտական ղեկավարի հետ կատարած աշխատանքից:**

| | | | | |
|---|---|---|---|---|
| Շատ գոհ եմ | Գոհ եմ | Այդքան էլ գոհ չեմ | Գոհ չեմ | Դժվարանում եմ պատասխանել |

**5.Գնահատեք ԳԿՄԿ կրթական գործընթացի կազմակերպման տարածքային, գույքային, տեխնիկական և լաբորատոր հնարավորությունները:**

| | Շատ գոհ եմ | Գոհ եմ | Այդքան էլ գոհ չեմ | Գոհ չեմ | Դժվարանում եմ պատասխանել |
|---|---|---|---|---|---|
| Ժամանակակից տեխնիկական միջոցներով լսարանային հագեցվածություն | | | | | |
| Ընթերցասրահների՝ տեխնիկական և տեղեկատվական միջոցներով հագեցվածություն | | | | | |
| Գիտական լաբորատորիաների տեխնիկական հագեցվածություն | | | | | |
| Էլեկտրոնային տեղեկատվական ռեսուրսների օգտագործման թույլտվություն | | | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | |
| Ուսումնական, մեթոդական և գիտական գրականության հասանելիություն | | | | | |
| Անհրաժեշտ ուսումնական և գիտական գրականության վերաբերյալ ուղղորդումներ | | | | | |

6.Գնահատեք Կենտրոնի կողմից տրամադրված հետևյալ գիտելիքների մակարդակը:

| | Շատ բարձր | Բարձր | Միջին | Ցածր | Դժվարանում եմ պատասխանել |
|---|---|---|---|---|---|
| Օտար լեզուներ | | | | | |
| Համակարգչային ծրագրեր | | | | | |

7.Ձեր մասնակցությունը Կենտրոնի գիտական կյանքին:

| | Կենտրոնում | Կենտրոնից դուրս |
|---|---|---|
| Գիտական կոնֆերանսներ | | |
| Քննարկումներ | | |
| Ուսանողական աշխատանքների մրցույթներ | | |
| Ամբիոնների գիտական աշխատանքներում ընդգրկվածություն | | |
| Բազային գիտահետազոտական լաբորատորիայի աշխատանքներում ընդգրկվածություն | | |

8.Արդյո՞ք տեղյակ եք Կենտրոնի ուսանողական խորհրդի աշխատանքներին, եթե այո, ապա ինչպե՞ս եք այն գնահատում:

ա/ այո ________ բ/ոչ_________

| Գերազանց | Լավ | Բավարար | Անբավարար | Դժվարանում եմ պատասխանել |
|---|---|---|---|---|
| | | | | |

9.Արդյո՞ք ծանոթ եք Շրջանավարտների հետ կապի և կարիերայի կենտրոնի գործունեությանը, եթե այո, ապա ինչպե՞ս եք այն գնահատում:

ա/ այո ________ բ/ոչ_________

| Գերազանց | Լավ | Բավարար | Անբավարար | Դժվարանում եմ պատասխանել |
|---|---|---|---|---|
| | | | | |

**10.** Լրացուցիչ մեկնաբանություններ և առաջարկություններ

___________________________________________________________________________

___________________________________________________________________________

_______________________________________________________________________